

**ՀԱՆԴԻՊՈՒՄ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ՀԵՏ**

Շարունակելով ծխական շրջաններու հովիւներուն, հոգաբարձութեանց ու երեսփոխաններուն հետ իրենց հերթական հանդիպումներու շարքը, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Ազգ. Վարչութեան անդամները Երեքշաբթի, Մարտ 28-ի երեկոյ այցելութիւն մը տուին Ս. Նահատակաց Եկեղեցւոյ ծխական համայնքի ներկայացուցիչներուն:

Հանդիպումին ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Ազգ. Վարչութեան անդամները տեղեկութիւններ տուին Ազգ. Առաջնորդարանի կրօնական եւ վարչական աշխատանքներուն մասին, կեդրոնանալով Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքին, քրիստոնէական Դաստիարակութեան, երիտասարդական միութեանց եւ այլ անմիջական մարզերու վրայ:

Խորհրդակցութեան նիւթ եղան ծխական շրջանի աշխատանքներն ու ծրագիրները, որոնք կը միտին Եկեղեցւոյ ծխական կեանքի աշխուժացման:

**PRELATE AND THE EXECUTIVE COUNCIL MEET WITH HOLY MARTYRS
CHURCH PASTOR AND BOARD MEMBERS**

In the evening of Tuesday, March 28, the Prelate and the Executive Council met with Holy Martyrs Pastor and the Board of Trustees and Delegates. In the course of the meeting, the Prelate gave details about the religious and administrative endeavors of the Prelacy, focusing on the Prelacy new building, Christian Education, and youth activities. Also discussed were the activities and programs of the parish community pertaining to the vitalization of the parish.

**ԹԻՖԼԵՔԵԱՆ ՄԱՆԿԱՄՍՈՒՐԸ ԿԸ ՏՕՆԵ
ԻՐ 30Դ ՏԱՐԵԴԱՐՁԸ**

Ուրբաթ, Մարտ 31-ին, Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութեամբ ու ներկայութեամբ, Կլէնտէյլ Hilton պանդոկին մէջ ճաշկերոյթով մը նշուեցաւ Ռիչըրտ Թիւֆէլքեան Ազգ. Մանկամտուր-Մանկապարտեզի 30-ամեակը:

Ներկայ էին Կլէնտէյլի քաղաքապետ Տար Բաֆֆի Մանուկեան եւ քաղաքապետարանի անդամներ, վարժարանի բարերարները Տէր եւ Տիկին Ռալֆ եւ Սաւի Թիւֆէլքեան, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինի ներկայացուցիչներ եւ վարժարանի բարեկամները:

Զեռնարկին ընթացքին, գնահատանքի արժանացան վարժարանի ուսուցչական կազմի անդամները: Ներկայացուեցաւ մանկամտուր-մանկապարտեզի 30 տարուան պատմականը ներկայացնող ժապաւեն մը:

Օրհնութեան ու գնահատանքի խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազան հայրը: Իրագործուեցաւ գեղարուեստական յայտագիր մը:

RICHARD TUFENKIAN PRESCHOOL'S 30th ANNIVERSARY BANQUET

On Friday, March 31, under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Richard Tufenkian Preschool celebrated its 30th anniversary at the Glendale Hilton. The Prelate attended the banquet, along with Glendale Mayor Rafi Manoukian and staff, sponsors Mr. & Mrs. Ralph & Savey Tufenkian, and representatives of the Board of Regents of the Prelacy schools. During the banquet, staff members of the school were honored for their service and dedication. A video was also shown chronicling the history of the school. The Prelate will convey his blessings and appreciation. The evening will also include an artistic program.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԵՐՈՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ

Շաբաթ, 1 Ապրիլի յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչութեան անդամները հանդիպում պիտի ունենան Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ հովիւին, հոգաբարձութեան եւ երեսփոխաններուն հետ:

Ժողովի ընթացքին, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Վարչութեան անդամները տեղեկութիւններ պիտի փոխանեն Ազգ. Առաջնորդարանի Լոր շէնքին, քրիստոնէական Դաստիարակութեան, երիտասարդական միութեան եւ այլ աշխատանքներու մասին:

Խորհրդակցութեան նիւթ պիտի ըլլան նաեւ ծխական շրջանի աշխատանքներն ու ծրագիրները, որոնք կը միտին եկեղեցւոյ ծխական կեանքի առաւել աշխուժացման:

PRELATE TO MEET WITH ST. GREGORY CHURCH PASTOR AND BOARD MEMBERS

In the afternoon of Saturday, April 1, the Prelate and the Executive Council will meet with San Francisco's St. Gregory Church Pastor Rev. Avedis Torossian, and the newly elected Board of Trustees and Delegates. Topics of discussion included the new Prelacy building, Christian Education, and youth issues. Also discussed were the activities of the church and parish community.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԿԸ ՄԱՏՈՒՑԱՆԷ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Շաբաթ, Ապրիլ 1-ը Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի Մուտն ի Վիրապ յիշատակի տօնն էր, եւ Սան Ֆրանսիսքոյի մեր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Կիրակի, Ապրիլ 2-ին, Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մէջ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն:

Ս. Պատարագի ավարտին, եկեղեցւոյ բոլոր ննջեցեալ բարերարներուն եւ նուիրեալ ծառայողներուն հոգիներուն համար տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն, որմէ ետք պիտի կատարուի մատաղօրհնէք:

THE FEAST OF ST. GREGORY THE ILLUMINATOR

In accordance with our church calendar, Saturday April 1 is the Feast of St. Gregory the Illuminator and also the name day of St. Gregory Church in San Francisco. On this occasion, the Prelate will conduct Holy Mass at St. Gregory the Illuminator church in San Francisco and deliver the sermon. Requiem services will take place remembering the deceased sponsors and servants of the church, after which the Blessing of the Offerings (*madagh*) will take place.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Լոս Անճելըս քաղաքի փաստաբան Rocky Delgadillo-ի նախաձեռնութեամբ ընդունելութիւն մը կազմակերպուած է Երկուշաբթի, Ապրիլ 3-ին, կ.ե. ժամը 5-ին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ:

Ընդունելութեան նպատակն է կենդանի վկայութիւններ փոխանցել Հայկական Ցեղասպանութեան վերապրողներու կողմէ, եւ Հայկական Ցեղասպանութիւնը փաստագրող վաւերական նկարներու ցուցադրութիւն, արուեստագետ նկարիչներ Արա Օշականի եւ Լեւոն Փարեանի կողմէ:

Այս ձեռնարկին ընթացքին, նաեւ պիտի ներկայացուի ցեղասպանութեան ուսուցման մասին ծրագիրներ Լոս Անճելըսի Պետական վարժարաններու ուսուցիչներուն:

Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Նարեկ Քիւյ. Փեիլիվանեան ներկայ պիտի ըլլայ այս հանդիսութեան, իբրեւ

Ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազան Հոր: Ազգ. Վարչութեան կողմէ
Ներկայ պիտի ըլլայ տիար Բեգլար Փիլաւճեան:

**L.A. CITY ATTORNEY ROCKY DELGADILLO TO HOST GENOCIDE
RECEPTION**

On Monday, April 3, at 5:00 p.m., Los Angeles City Attorney has organized a genocide reception at Los Angeles City Hall. The reception will include the exhibit, “/witness”, Portraits and Oral Histories of Armenian Genocide survivors, and the unveiling of the Genocide Education Project’s Teacher Training Program for the Los Angeles Unified School District. The exhibit will showcase photographs by Ara Oshagan and Levon Parian. Representing the Prelate will be Rev. Nareg Pehlivanian of Montebello’s Holy Cross Cathedral and Mr. Peklar Pilavjian representing the Executive Council.

**ԴԱԲԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

Երկուշաբթի, 3 Ապրիլի երեկոյեան, կազմակերպութեամբ Դաւթեան-Մարիամեան Կրթական Հաստատութեան Վարչութեան, ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ Կլէստէյլի Անուշ ճաշարանին մէջ:

Ընդունելութիւնը պիտի սկսի երեկոյեան ժամը 6-ին: Այս առիթով պիտի ներկայացուին Խորհրդատու Խորհուրդի գործօն անդամները:

Առաջնորդ Սրբազան հայրը, ընդառաջելով հրաւերին, ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները: Ներկայ պիտի ըլլայ նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ տիար Հրայր Պալեան:

DAVIDIAN-MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION’S RECEPTION

On Monday, April 3, at 6:00 p.m. the Davidian-Mariamian Educational Foundation will host a reception at Glendale’s Anoush Restaurant in honor of the Civic Advisory Board. During the reception, members of the Advisory Board will be introduced. The Prelate will attend and convey his blessings. Joining the Prelate will be Mr. Hrair Balian, Chair of the Executive Council.

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ-ՉՐՈՅՑ՝ Ե. Հ. ԽՈՐՀՈՒՐԴԻ
ԳՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՄԱՍԻՆ**

Երեքշաբթի, Ապրիլ 4-ի երեկոյեան, Կլենտոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, երեկոյեան ժամը 8:30-ին, Սուրբ Գրային սերտողութենէն ետք, տեղի պիտի ունենայ երիտասարդական հաւաք մը:

Յատուկ հրաւերով ներկայ պիտի ըլլայ եւ պիտի բանախօսէ իրաւաբան Վանայ Կիտցինեան: Դասախօսութեան նիւթն է՝ հայ եկեղեցւոյ ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերակատարութիւնը Էքիւմենիք, Միջ-եկեղեցական շարժումին մէջ, եւ թէ՛ հայ երիտասարդը ինչպէս իր մասնակցութիւնը կրնայ բերել Միջ-եկեղեցական աշխատանքներուն:

Հաւաքը պիտի վարէ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկեան:

Յայտնենք որ, բարձր տնօրինութեամբը Մեծի Տանն Կիլիկիոյ գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ կարգադրութեամբը Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր, Օր. Կիցինեան մէկ ամիս առաջ Պրագիլոյ մէջ մեր Թեմը ներկայացուցած էր եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի 9-րդ ժողովին:

AN OPEN DISCUSSION WITH THE YOUTH WITH MISS VANNA KITSINIAN

On Tuesday, April 4, at 8:30 p.m., immediately following Bible Study, an open discussion with the youth will take place at Glendale's St. Mary's Church, on the topic of the nature of Ecumenism and the involvement of the Armenian Church. Miss Vanna Kitsinian will speak about her experience as a youth delegate at the World Council of Churches 9th Assembly which took place in Porto Alegre, Brazil last month. Joining Miss Kitsinian will be Very Rev. Fr. Barthev Gulumian.

ԾԱՂԿԱԶԱՐԴԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

Կիրակի, 9 Ապրիլը Ծաղկազարդ է: Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագ պիտի մատուցուի եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցուի հաւատացեալ մեր ժողովուրդին:

Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հայրը Ս. Պատարագ պիտի մատուցանէ Մոնթեպելլոյի Սուրբ Խաչ Մայր Տաճարի մէջ:

Էնսիկոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագը պիտի մատուցանէ բարձրաշնորհ Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Բարձր. Տ. Սուրեն Արք. Գաթարոյեան, Բերիոյ Թեմի նախկին Առաջնորդ, որ հիւրաբար մեր Թեմը կը գտնուի, Ս. Պատարագ պիտի մատուցանէ Ֆրեզկոյի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ:

Գերպ. Տ. Միւռն Շ. Վրդ. Ազնիկեան, Ս. Պատարագ պիտի մատուցանէ Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ, իսկ Յոգշ. Տ.

Պարթև Կրդ. Կիլիմեան՝ Օրենճ Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց
Եկեղեցւոյ մէջ:

PALM SUNDAY HOLY MASS SCHEDULE

Sunday, April 9 is Palm Sunday. On this occasion, the Prelate will conduct Holy Mass at Montebello's Holy Cross Mother Cathedral. His Eminence Archbishop Yeprem Tabakian will officiate at Encino's Holy Martyrs Church, His Eminence Archbishop Suren Kataroyan, previous Prelate of Aleppo, will officiate at Fresno's Holy Trinity Church, Very Rev. Fr. Muron Aznikian at Hollywood's St. Garabed Church, and Very Rev. Fr. Barthev Gulumian at Orange County's Forty Martyrs Church.